ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

17... մարտի 2023թ. N.....15-Լ.....

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 30-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 46.1-ին հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 30-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Հավելվածի 12-րդ կետի 34-րդ ենթակետի «վերջակետ» կետադրական նշանը փոխարինել «միջակետ» կետադրական նշանով.

2) Հավելվածի 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ ենթակետով.

«35) իրականացնում է հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումներ՝ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների միջոցով:»:

3/17/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան